ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 50 - Ա

07 փետրվարի 2020թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ, ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 66-րդ հոդվածների, «Պետական, ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի <զ> կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 2-րդ մասի 9-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1831-Ա որոշումը

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի

Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված միացման պայմանագիրը.

2) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆինանսական մնացորդը 2020 թվականի փետրվարի 3-ի դրությամբ՝ 22008775,6 ՀՀ դրամի չափով.

3) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնվող գույքի քանակի վերաբերյալ ակտը՝ 2020 թվականի փետրվարի 3-ի դրությամբ.

4) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնվող կրթական և վարչական փաստաթղթերի քանակի վերաբերյալ ակտը՝ 2020 թվականի փետրվարի 3-ի դրությամբ.

5) «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացման ձևով վերակազմակերպման հետևյալ կարգն ու պայմանները՝

ա. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացման ձևով ստեղծված կազմակերպության պետական գրանցումից հետո, հնգօրյա ժամկետում, միացվող կազմակերպությունների կողմից կազմված և կազմակերպությունների հիմնադիր հանդիսացող պետական կառավարման լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի, որոշմամբ հաստատված փոխանցման ակտերի համաձայն «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանձնում է, իսկ միացման ձևով վերակազմակերպված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ընդունում է միացվող կազմակերպությունների առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվարկները: Հանձնում ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և ենթակա են հաստատման Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի կողմից.

բ. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպված են համարվում միացման արդյունքում ստեղծված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ

դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման պահից.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր /ներառյալ՝ վիճարկվող/ պարտավորությունների «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

07.02.2020

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Поручается SANOSYAN GNEL 1710830069

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ